


Յակորեանց մեր վանքի հայ գրչագիրներուն մանրանկարները և
 Ընդհանրապէս դասական և ումանթիք նկարչութեան
 տեսարաններու և դէմքերու վարժուած մեր նայւածքներուն՝
 այս իսկ պատճառաւ, իրաւ է թէ քիչ մը խորթ կ'ընեն
 այս պատկերները. ընդունիլ պէտք է սակայն թէ, ինչպէս
 անվերապահօրէն յայտարարեցին զեղարուեստներու գիտական
 հասկցողութիւնը ունեցող բազմաթիւ օտար ու մերագգի հմուտ
 անձնաւորութիւններ, կրօնական նկարչութեան հոյկական ար-



(թիւ 49) Գմբեթին ներքին զազաթի նկարը

ուեստի և որմանկարի տեսակէտներէն դիտուած ասեմնին, իս-
 կաարիպ յաջողութիւններ են անոնք:

Ըմբռնելու համար այս կերպ պատկերազարդութեան ար-
 ժէքը, պէտք է ինկատի ունենալ նախ սա պարագան թէ
 հայկական ճարտարապետութեան հնադրոշմ ոճով կատարուած
 կառուցուածքի մը համար, որպիսին է եղած այս եկեղեցւոյ
 շինութիւնը, անհրաժեշտութիւն մըն էր հայկական նկարչու-